ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«24» 09 2021թ.

ՀՐԱՄԱՆ N 487-Հ

«ԼՅՈՒՖԹՀԱՆԶԱ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ» ավիաընկերության 2021 թվականի սեպտեմբերի 15-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով՝ 2021 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2022 թվականի մարտի 25-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածում՝ 2021 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2022 թվականի մարտի 25-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ ուղղությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, և հետևաբար սույն կետում նշված ուղղությամբ մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «զ» ենթակետով սահմանված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները ժամանակավոր կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Revoked certificate

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 133/2021
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 133/2021
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ» «Lufthansa German Airlines»
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A319-112, A319-114, A320-214
Հաճախականությունը Frequency	շաբաթական 3 չվերթ 3 flights per week
Երթուղին Air route	Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ Frankfurt/EDDF/-Yerevan/UDYZ/-Frankfurt/EDDF/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	01/11/2021 մինչև 25/03/2022 01/11/2021 till 25/03/2022

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION COMMITTEE
TATEVIK REVAZYAN

Recoverable Signature

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

24.09.2021
(տալու ամսաթիվը)
(date of issue)